ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա – Նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն

Թեմա – Տեղանքի ուսումնասիրումը, տարատեսակները և մարտավարական հատկանիշները

Ձինղեկ – Ռոբերտ Հարությունյան

Հետազոտական աշխատանքի ղեկավար – Վարդան Ստեփանյան

Վերապատրաստող կազմակերպություն - թիվ 2 ավագ դպրոց

Կապան 2023

Բովանդակություն

Ներածություն 3

1. Տեղանքը և նրա նշանակությունը 6

2. Տեղանքի ուսումնասիրման ձևերը 11

2.1. Տեղանքի հետախուզումը 12

2.2. Տեղանքի ուսումնասիրումը քարտեզի միջոցով 13

2.3. Տեղանքի ուսումնասիրումը օդալուսանկարներով Error! Bookmark not defined.

Եզրակացություն 19

Օգտագործված գրականության ցանկ 20

Ներածություն

Ռազմական տեղագրությունը համարվում է մարտական պատրաստության կարևորագույն առարկաներից, քանի որ միայն տեղանքի մարտավարական հատկանիշների և պատերազմական դաշտի ճիշտ գնահատմամբ ու օգտագործմամբ է հնարավոր դառնում արդյունավետ կազմա¬կերպել ու վարել մարտական գործողությունները:

Ժամանակակից մարտում զինված ուժերի հաղթանակը մեծապես կախված է հենց ռազմական տեղագրության ուսումնասիրությունից, և զինծառայողները պետք է ոչ միայն տիրապետեն տեղանքին, այլև պետք է իմանան տեղանքի տարատեսակները, դրանց մարտավարական հատկանիշները, պետք է կարողանան ինքնուրույն կողմնորոշվել տեղանքում, կարդալ տեղագրական քարտեզը, որոշել հեռավորության սահմաններն ու գնահատել տեղանքը:

Տեղանքի ուսումնասիրումն ընդգրկում է նաև զինված ուժերի անցնելիք ճանապարհահատվածի աշխարհագրական դիրքի և կլիմայական պայմանների գնահատումը:

Ռազմական տեղագրությունը ուսումնասիրում է նաև մարտական գործունեության ապահովման համար դաշտային չափումների, հրամանատարների՝ աշխատանքային

քարտեզների վարման և գրաֆիկական մարտական փաստաթղթերի, քարտեզների մշակման եղանակներն ու միջոցները:

Ռազմական տեղագրությունը հիմնված է քարտեզագրության և աշխարհագրության պատմության տվյալների վրա, բայց և այնպես, ի տարբերություն հասարակ քարտեզագրության, այն չի կիրառվում քաղաքացիության մեջ, այլ բացառապես զինված ուժերում:

Ռազմական տեղագրության ուսումնասիրությունը զինծառայողների մոտ զարգացնում է դիտողականությունը, ճշգրտությունը, դիտարկումների արդյունքների և տեղանքի մարտավարական հատկանիշների վերլուծման ու գնահատման ունակությունը:

Զինված ընդհարումների ժամանակ մարտական գործողություններ կազմակերպելու և առաջադրված մարտական խնդիրը կատարելու համար առանձնահատուկ տեղ է զբաղեցնում տեղանքի մարտավարական հատկանիշների ճիշտ օգտագործումը: Վերջիններիս հմուտ օգտագործումը նպաստում է ստորաբաժանումներին առաջադրված մարտական խնդիրների հաջող լուծմանը, այդ իսկ պատճառով տեղանքը հանդիսանում է մարտական իրավիճակի կարևորագույն մասնիկներից մեկը:

Տեղանքի ուսումնասիրման եղանակների իմացությունը, դրանում կողմնորոշվելու հմտությունը տարբեր պայմաններում, գիշեր, ցերեկ, սահմանային փակ տեսանելիության պայմաններում նպաստում են մարտում հաջողության հասնելու համար, օգտագործելով տեղանքի բարենպաստ հատկություններից, օգնում են արագ ու վստահ կողմնորոշվել և պահպանել հանձնարարված շարժման ուղղությունն ռազմերթի և մարտի ժամանակ:

Օգտվելով տեղանքի ուսումնասիրման եղանակներից՝ տեղագրական քարտեզներից, օդալուսանկարներից, սրանք հնարավորություն են տալիս հրամանատարին նախապես ուսումնասիրելով և գնահատելով տեղանքը ինչպես իրենց սեփական, այնպես էլ թշնամու դիրքերում, նախապատրաստել անհրաժեշտ տվյալներ ռազմերթի իրականացման համար, կատարել հաշվարկներ հեռավոր փոքրածավալ նշանակետի վրա արդյունավետ կրակ վարելու նպատակով, գնահատել տեղանքի ազդեցության աստիճանը միջուկային

պայթյունի ոչնչացման գործոնների վրա։ Այդ իսկ պատճառով այս թեմայի յուրացումը շատ կարևոր է աշակերտների շրջանում:

Այս դասապրոցեսում մանրամասնորեն կտանք տեղանք հասկացության բացատրությունը, նրա տեսակները և նշանակությունը մարտում, տեղանքի ուսումնասիրման ձևերը՝ գործնական աշխատանքի միջոցով:

Այս աշխատանքը բաղկացած է ներածությունից, 3 հարցերից, եզրակացությունից, և օգտագործված գրականության ցանկից: Առաջինը, որ պետք է բացատրենք աշակերտներին՝ դա տեղանքը և նրա նշանակությունն է մարտում, որտեղ նկարագրվում է տեղանքը, տեղանքի նշանակությունը մարտում, տեղանքի տեսակները, նրա բնորոշ գծերը:

Երկրորդ հարցը՝ տեղանքի ուսումնասիրման ձևերն են, որտեղ ներկայացնում ենք տեղանքի ուսումնասիրման եղանակները, այնուհետև առանձին առանձին ներկայացվում է յուրաքանչյուր ջոկինիրենց ուսումնասիրման եղանակները։

1. Տեղանքը և նրա նշանակությունը մարտում։

Սկզբում տալիս ենք աշակերտներին հասկացություն այն մասին, որ տեղանքը դա երկրի մակերևույթի որոշակի տեղամաս է, որի վրա անցկացվելու են մարտական գործողությունները։ Երկրի մակերևույթի անհարթությունների ամբողջությունը կոչվում է տեղանքի ռելիեֆ, իսկ նրա վրա տեղաբաշխված բոլոր առարկաները, որոնք ստեղծվել են մարդկանց կամ բնության կողմից, կոչվում են տեղանքի առարկաներ։

Ռելիեֆը և տեղանքի առարկաները տեղանքի հիմնական տեղագրական տարրերն են։ Տեղանքի տեղագրական տարրերը որոշում են նրա մարտավարական հատկությունները, քանի որ դրանք ազդում են մարտի /գործնական դասի/ կազմակերպման և անցկացման, մարտում մարտական տեխնիկայի օգտագործման, դիտարկման, կրակի վարման, կողմնորոշման և քողարկման պայմանների վրա։

Տեղանքի մարտավարական և պաշտպանական հատկությունները ճիշտ և բազմակողմանի գնահատումը և դրանց հմուտ օգտագործումը մարտական գործողություններում (գործնական դասապրոցեսում) հաջողության հասնելու հիմնական պայմաններն են։ Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր աշակերտ պարտավոր է կատարելագործել իր գիտելիքները տեղանքի մասին, մշակել դրանք գործնականում հմտորեն օգտագործելու ունակություն ունենալու նպատակով։

Ռազմական գործողությունների իրականացումը եղանակի տարբեր պայմաններում, օրվա ցանկացած ժամին, տեղանքի բազմազան պայմաններում բարձր պահանջներ է առաջադրում զորքերին՝ տեղանքի ուսումնասիրման, գնահատման և օգտագործման առումով։

Տեղանքի տեսակները և դրանց ազդեցությունը մարտի կազմակերպման և անցկացման վրա։

Ըստ ռելիեֆի բնույթի տեղանքը լինում է

- հարթավայրային,
- բլրային
- լեռնային,

իսկ ըստ հողաբուսական ծածկույթի բնույթի՝

- անտառային,
- ճահճային,
- անապատատափաստանային։

Ռելիեֆի և հողաբուսական ծածկույթի համադրումից առաջանում են տեղանքի լեռնաանտառային, անտառաճահճային և այլ տեսակներ։

Հարթավայրային տեղանքը

հարթ կամ սակավ բլրապատ տարածք է։ Բլուրների լանջերի թեքությունը 1-2-ից ոչ ավել չէ։ Հարթավայրային տեղանքը կարող է լինել բաց, եթե նրա վրա չկան տեղանքի առարկաներ, կամ փակ, եթե այդտեղ առկա են անտառներ, թփուտներ, բնակավայրեր։ Գետերի, լճերի և ճահիճների մեծաքանակության դեպքում հարթավայրային տեղանքը կտրտված, մասնատված տեսք է ստանում։ Եվ եթե այն քիչ է մասնատված, մատչելի է բոլոր ցամաքային զորատեսակների տեղաշարժերի և մարտական գործողությունների համար։ Կավային, ավազակավային, կավաավազային և տորֆային տեղանքը բարձր խոնավության պայմաններում դժվարեցնում է տեղաշարժը, և դառնում է համարյա անանցանելի։

Բլրոտ տեղանքն

ունի բարձրությունների և իջվածքներ, որոնք չեն խոչընդոտում մարտական տեխնիկայի և տրանսպորտի բոլոր տեսակների տեղաշարժերին: Այստեղ գերակշռում են բլուրները, լեռնահովիտները, հազվադեպ՝ ձորակները: Բլուրների լանջերի թեքությունը չի գերազանցում 2-3-ից: Բլրային տեղանքը նպաստում է քողարկմանը, դիտարկման կետերի և կրակային դիրքերի ընտրությանը: Այն որոշակի պաշտպանական հատկություններ ունի միջուկային զենքի գործադրման դեպքում:

Լեռնային տեղանքում

գերակշռում են լեռները, լեռնաշղթաները, կիրճերը և լեռնահովիտները: Դրանց լանջերը, որպես կանոն, թեք են և ժայռոտ: Ճանապարհների բացակայության դեպքում այստեղ դժվարանում է ինչպես երթևեկությունը, այնպես էլ դիտարկումը, կրակավարումը ու կողմնորոշումը: Դրա հետ մեկտեղ լեռնային տեղանքն ապահովում է զորքերի շարժման և տեղաբաշխման քողարկվածությունը: Բացի այդ, լեռնային տեղանքն կարող է պաշտպանել զորքերին ատոմային պայթյունի ժամանակ առաջացած ճառագայթումից և թուլացնել հարվածային ալիքի ուժը:

Անտառային տեղանքը

երկրի մակերևույթի այնպիսի տեղամաս է, որի կեսից ավելին ծածկված է անտառներով: Ըստ ձևի անտառները լինում են միաշարք, որոնք չունեն մանրանտառ (թփուտներ), և բազմաշարք, որտեղ ծառերը տնկված են տարբեր ժամանակահատվածներում: Ըստ սաղարթի խտության և թավության անտառները լինում են

- շատ խիտ,
- խիտ
- նոսր:

Ըստ տեսակի դրանք լինում են՝

- լայնատերև,
- փշատերև
- խառը:

Ճահճային տեղանքը

երկրի մակերևույթի այնպիսի տեղամաս է, որտեղ կան չափից ավելի խոնավ հողեր: Ճահճային տեղանքն իր հերթին բաժանվում է ճահիճների և ճահճացված հողերի: Ճահճային տեղանքի առանձնահատկություններից է բնակավայրերի բացակայությունը կամ թույլ բնակեցվածությունը, ճանապարհային վատ պայմանները, դժվար անցանելի և անանցանելի տեղամասերի առկայությունը: Դա խանգարում է զորքերի մարտական

տեխնիկայի տեղաշարժին, ինչպես նաև մատակարարմանը և էվոկուացիային (տարհանմանը)։ ***Անապատատափաստանային տեղանքը***

դա չոր անապատները, կիսանա-պատները և տափաստաններն են։ Դրանք խիստ չորային տեղանք են՝ մայրցամաքային կլիմայով։ Նրանց բնորոշ են լայնատարած, անտառազուրկ, քիչ բնակեցված տարածությունները, ճանապարհազրկությունը, ջրի պակասությունը և հողաբուսական յուրահատուկ պայմանները։ Բնահողի բնույթով առանձնացնում են տափաստանի հետևյալ տեսակները՝

- վազային
- կավային
- անտառային
- քարային
- աղուտային

Առավել լավ տարածում ունեն ավազային տափաստանները։

Չնայած տափաստանի բաց տարածությունը հարմար է զորաշարժի համար, սակայն մարտական խնդիրների լուծումը բացասաբար է անդրադառնում բնական արգելքների բացակայությունը, որը դժվարեցնում է պաշտպանությունը և զորքերի քողարկումը։

Իսկ տեղանքի ռեսուրսների՝ ջուր, վառելիք, սակավությունը դժվարեցնում է զորքերի մատակարարման գործը։ Աչքի զարնող տեղանքի առարկաների բացակությունը դժվարեցնում է կողմնորոշումը և նպատականշումը։

Ըստ դասի պլանի նախապես դասակի համար ընտրվում է այն վայրը, տեղանքը, որտեղ պետք է իրականացվի :

Աշխատանքում ներկայացված է գործնական պարապմունքի անցկացման մոդելն է



Տեղանքի ուսումնասիրման ձևերը

Ջոկերի առաջադրանքները

Դասակը բաժանելով ջոկերի, յուրաքանչյուր ջոկի հրամանատար և ջոկի անդամներ պարտավոր են մանրակրկիտ ուսումնասիրել և հնարավորին չափ ամբողջությամբ իմանալ այն տեղանքը, որտեղ պետք է իրականանա կամ ընթանա գործնական դասը: Գիտելիքներն անհրաժեշտ են տեղանքում անսխալ կողմնորոշվելու, ինչպես նաև տեղանքի դրական կողմերը մարտի ժամանակ լրիվ օգտագործելու համար: Տեղանքի ուսումնասիրման համար ջոկերին տրվում է առաջադրանք՝

Առաջին ջոկ՝

- տեղանքի հետախուզում
  - անմիջական դիտում
  - հետախուզում
- տեղանքի ուսումնասիրումը քարտեզի միջոցով

Երկրորդ ջոկ՝

- տեղանքի ուսումնասիրումը օդալուսանկարներով
- տեղի բնակիչների տեղեկատվություն



2.1. Տեղանքի հետախուզումը 1-ին ջոկ

Տեղանքի հետախուզումը իր մեջ ներառում է անմիջական դիտումը և հետախուզումը:

Այս եղանակը հնարավորություն է տալիս ճշգրիտ տվյալներ ձեռք բերել ռելիեֆի և տեղանքի առարկաների, անցանելիության և պաշտպանական հատկությունների, դիտարկման պայմանների, կրակի վարման, կողմնորոշման և քողարկման մասին: Թերությունն այն է, որ հնարավոր չէ կարճ ժամանակահատվածում ուսումնասիրել մեծ տեղամասեր: Այդ պատճառով դասակին հանձնարարվում է ընտրել մոտակա, միջին և հեռավոր գոտիները ուսումնասիրելու եղանակներից միայն մոտակա գոտին:

Ջրային արգելքները հետախուզելիս ուշադրություն է դարձվում գետափի վիճակին, իր և հակադիր ափերին ջրային արգելքների բնույթին, որոշվում է լայնությունը, խորությունը, հոսանքի արագությունը, հունի և ափերի վիճակը, դրանց թեքությունը, ափերին և ջրում արգելափակոցների առկայությունը, գետանցման հարմար տեղերը, դրանց թիվը և վիճակը:

Դիդակտիկ նյութեր

- ռետինե երկարաճիթ կոշիկներ

- ձեռնափայտ
- քարտեզ
- դիտարկման մատյան
- տեղանքին համապատասխան քողարկիչ հագուստ

Բնակավայրերի հետախուզումը սկսվում է շրջակայքի զննումով: Բնակավայրերում հատուկ ուշադրություն է դարձվում խաչմերուկների շրջակայքի շենքերին, տների վերին հարկերին և մյուս տեղերին:

Անտառում հետախուզումը սկսվում է անտառեզրի զննումով: Անտառում հետախուզելիս սովորաբար շարժվում են ճանապարհով կամ կածաններով: Առանձնապես մանրակրկիտ ստուգվում են անտառեզրերը, ձորակները, լեռնագոգերը, մուտքերն ու ելքերը, գետնուղիները, կապանները, կամուրջները, ծառերի կատարները և այլ տեղեր, ուր ավելի հավանական են հակառակորդի դարանակալումները:

2.2. Տեղանքի ուսումնասիրումը քարտեզի միջոցով: 1-ին ջոկի 2-րդ խումբ



Քարտեզը դա տեղանքի մասին տեղեկություններ ստանալու հիմնական աղբյուրներից մեկն է: Քարտեզով համեմատաբար արագ կարելի է ուսումնասիրել և գնահատել մարտական գործողությունների շրջանի տեղանքի մարտավարական պաշտպանական հատկությունները, անկախ այն փաստից թե ինչ հեռավորության վրա է այն գտնվում: Քարտեզները հնարավորություն են տալիս ստանալ քանակական և

որակական տեղեկություններ տեղական առարկաների մասին, տեղանքի ռելիեֆի մասին, ինչը շատ կարևոր է ստորաբաժանումների հրամանատարների համար մարտի կազմակերպման ընթացքում: Ժամանակակից մեծամասշտաբ քարտեզների օգնությամբ կարելի է ճիշտ պատկերացնել տեղանքի առարկաները և դրանց բնորոշ կողմերը: Քարտեզի միջոցով հնարավոր է ժամանակին, արագ և մանրակրկիտ ուսումնասիրել տեղանքի խոշոր տեղամասեր և կատարել անհրաժեշտ չափումներ ինչպես սեփական, այնպես էլ թշնամու դիրքերում: Ուսումնասիրելով տեղանքը քարտեզով՝ պետք է նկատի ունենալ, որ քարտեզը տպագրելու ժամանակից հետո՝ տեղանքում հնարավոր են շատ փոփոխություններ, որոնք չկան քարտեզի վրա:

Տեղանքի ուսումնասիրման հերթականությունը և խորության աստիճանը որոշվում է մարտական իրավիճակի պայմաններով, ստորաբաժանումների մարտական խնդիրների բովանդակությամբ, եղանակային պայմաններով և մարտական տեխնիկայի բնութագրումով: Տեղանքի ուսումնասիրումը, որպես կանոն, սկսվում է նրա ընդհանուր բնույթի որոշմամբ, իսկ հետո մանրակրկիտ ուսումնասիրվում են տեղական առանձին առարկաները, ռելիեֆի ձևը և մանրամասնությունները, դրանց ազդեցությունը դիտարկման պայմանների, քողարկման, անցանելիության, պաշտպանական պայմանների, հրաձգության անցկացման և կողմնորոշման վրա: Տեղանքի մանրամասն ուսումնասիրումը նպատակ ունի որոշել տեղական առարկաների, ստորաբաժանման գործելու կամ շարժման երթուղու սահմաններում տեղանքի ձևի ու մանրամասների որակական բնութագիրը և դրանց ազդեցությունը քողարկման, դիտարկման, կողմնորոշման և կրակ վարելու վրա:

2-րդ խմբի առաջադրանքն է

- Ուսումնասիրում են բնակավայրերը,
- ճանապարհները,
- գետերը,
- կամուրջները,
- ծանծաղուտները,
- բուսական ծածկույթը,
- ճահիճները,
- բարձրունքների թեքությունը :

Դիդակտիկ պարագաներ

- տեղագրական քարտեզ,
- մատիտ
- գրիչ
- ստանդարտ թուղթ
- գրանցամատյան

Տեղանքի ճիշտ գնահատումից է կախված մարտական առաջադրանքի լիարժեք և ժամանակին կատարումը:

ՆՅՈՒԹԻ ՅՈՒՐԱՑՈՒՄ

Ուսումնական նյութը մատուցելուց պետք է հասնենք այն աստիճանի, որ աշակերտը լիարժեք հասկանա, որ քարտեզները հրամանատարների, շտաբների կողմից օգտագործվում են բազմաբնույթ նպատակներով՝

1. Քարտեզի միջոցով կատարվում է տեղանքի ուսումնասիրում և գնահատում,
2. կողմնորոշում տեղանքում,
3. որոշվում են նշանակետերը, դիրքը, կատարվում են ինժեներատեխնիկական հաշվարկներ:
4. Հրամանատարի աշխատանքային քարտեզը դա տեղագրական քարտեզն է, որտեղ հրամանատարը պայմանական նշանների օգնությամբ ցույց է տալիս մարտավարական կամ հատուկ իրավիճակը և դրա փոփոխությունը մարտի ընթացքում:

Ստորաբաժնումների հրամանատարներն աշխատում են 1:50000 կամ 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզներով: Իսկ հատուկ առաջադրանքերների համար (ջրային տարածքների հաղթահարման, խոշոր բնակավայրերում մարտի օգտա-գործման համար) օգտագործվում են ավելի խոշոր մասշտաբի 1:10000 կամ 1: 25000 տեղագրական քարտեզներ: Տեղագրական քարտեզները տրվում են ստորաբաժանումներին՝ շտաբների կողմից միջոցառման նախապատրաստման ընթացքում:

Տեղանքի ուսումնասիրման այս եղանակը ամենատարածվածն է:

Քարտեզի միջոցով ուսումնասիրման թերի կողմն այն է, որ երբեմն չեն երևում տեղանքի սեզոնային և այլ բնույթի փոփոխությունները, որոնք եղել են գնահատման

ժամանակ։ Տեղանքի մասին անհրաժեշտ տվյալները պետք է ճշտել և լրացնել օդալուսանկարման միջոցով։

2.3. 2-ՐԴ ՋՈՒԿ

Տեղանքի ուսումնասիրումը օդալուսանկարներով

Նախապես աշակերտներին ներկայացնում ենք տվյալ եղանակով աշխատելու էությունը և բացատրում, որ դրանք քարտեզի հետ համեմատած տալիս են թարմ և ստույգ տեղեկություններ տեղանքի մասին: Դրանցով կարելի է մանրակրկիտ ուսումնասիրել տեղանքը, թշնամու պաշտպանական կառույցների տեղադիրքը և բնույթը, նրա կրակային միջոցները, կենդանի ուժի և մարտական տեխնիկայի տեղաբաշխումը: Տեղանքն ուսումնասիրելիս օդալուսանկարների օգտագործումը հնարավորություն է տալիս ստանալ ավելի թարմ և հավաստի տեղեկություններ ինչպես տեղանքի, այնպես էլ հակառակորդի, նրա տեխնիկայի և ինժեներական կառույցների վերաբերյալ:

Լուսանկարման պահին, ըստ ֆոտոապարատի դիրքի, կարելի է ստանալ պլանային կամ հեռապատկերային նկար:

Հեռապատկերային նկարահանման ժամանակ մոտիկ գտնվող առարկաներն ավելի խոշոր են երևում: Դրանք կարող են փակել ավելի հեռու գտնվող առարկաները և տեղանքը:

Համեմատաբար հարթ տեղանքը և տեղանքի առարկաների պլանային նկարահանման դեպքում պատկերվում են այնպես, ինչպես երևում են վերևից: Պլանային նկարի մասշտաբը բոլոր տեղամասերում կարելի է համարել նույնը:

Միաժամանակ օդալուսանկարները լրիվ տեղեկություն չեն տալիս տեղանքի մասին (ճահիճների անցանելիությունը, բնահողի վիճակը, գետերի խորությունը, ջրերի հոսքի արագությունը և այլն):

Այս եղանակը հնարավորություն է տալիս ամենաճշգրիտ տվյալները ձեռք բերել ռելիեֆի և տեղանքի առարկաների, անցանելիության և պաշտպանական հատկությունների, դիտարկման պայմանների, կրակի վարման, կողմնորոշման և քողարկման մասին: Թերությունն այն է, որ հնարավոր չէ կարճ ժամանակահատվածում ուսումնասիրել մեծ տեղամասեր, այդ պատճառով ընտրում ենք դպրոցի հարակից տարածքը և մոտակա գոտիները

Տեղանքի ուսումնասիրման համար լրացուցիչ տեղեկություն կարող է տալ տեղի բնակիչների տեղեկատվությունը ։

ԴԻԴԱԿՏԻԿ ՊԱՐԱԳԱՆԵՐ

1. Լուսա և տեսանկարահանող սարքեր
2. Դռոն
3. Գրանցամատյան
4. Թուղթ, գրիչ
5. Ձայնագրող սարքեր

Վերջնարդյունքը

Պատրաստվելուց հետո յուրաքանչյուր ջոկի հրամանատար ներկայացնում է իր խմբի հանձնարարականի պատասխանները, ձեռք բերած տեղեկությունները և հետազոտությունները

Մյուս խմբերի անդամները մասնակցում են ներկայացված նյութերի քննարկմանը և կատարում՝ լրացումներ:

Ամփոփումը կատարում է զինղեկը ՝ ներկայացնելով իր դիտարկումները խմբերի աշխատանքի վերաբերյալ: Սովորողներին հնարավորություն է տրվում գնահատել խաղի արդյունքները և ներկայացնել իրենց ցանկություններն ու առաջարկությունները խաղի վերաբերյալ:

Եզրակացություն

Այսպիսով ամփոփելով աշխատանքի արդյունքները կարող են եզրակացնել, որ տեղանքը դա երկրի մակերևույթի որոշակի տեղամաս է, որի վրա անցկացվելու են մարտական գործողությունները: Տեղանքի տեղագրական տարրերի օգնությամբ որոշվում է տեղանքի մարտավարական հատկությունները, քանի որ դրանք ազդում են մարտի կազմակերպման, անցկացման, դիտարկման, կրակի վարման, կողմնորոշման, քողարկման, մարտում մարտական տեխնիկայի օգտագործման վրա: Տեղանքի ուսումնասիրման եղանակներից են՝

- տեղանքի հետախուզումը, սա հնարավորություն է տալիս ամենաճշգրիտ տվյալներ ձեռք բերել ռելիեֆի, տեղանքի առարկաների, անցանելիության և պաշտպանական հատկությունների, դիտարկման պայմանների, կրակի վարման, կողմնորոշման և քողարկման մասին:
- տեղանքի ուսումնասիրումը քարտեզի օգնությամբ, սա հնարավորություն է տալիս ժամանակին, արագ և մանրակրկիտ ուսումնասիրել տեղանքի խոշոր տեղամասերը և կատարել անհրաժեշտ չափումներ:
- տեղանքի լուսանկարումը օդալուսանկարներով, սրանք տալիս են ավելի թարմ և ստույգ տեղեկություններ տեղանքի մասին:

Այսպիսով կարող ենք ասել որ ռազմական տեղագրությունը դպրոցում ուսուցանվող զինվորական առարկա է, որի բաղկացուցիչ մասերից են տեղանքի ուսումնասիրման մեթոդների մշակումը, կողմնորոշումը ռազմական գործողությունների նախապատրաստման և անցկացման նպատակով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ռազմական տեղագրություն (ՀՀ ԶՈՒ Գլխավոր շտաբ ՍԻՄ տպագրատուն Երևան 2008)

2. Նախնական զինվորական պատրսաստություն («Աստղիկ» հրատարակչություն 2010)

3. Մարտական կանոնադրություն երրորդ մաս (ՀՀ ԶՈՒ մարտական պատրաստության վարչություն, Երևան 2006)